ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԳՄՄՆ «Երևանի Լեոյի անվան հ. 65 ավագ դպրոց» ՊՈԱԿ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ **ԵՐԳԸ՝ ՄՈՏԻՎԱՑԻԱՅԻ ՄԻՋՈՑ ՖՐԱՆՍԵՐԵՆ ԼԵԶՈՒՆ ԴԱՍԱՎԱՆԴԵԼՈՒ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ**

Կատարող՝ **Հասմիկ Պետրոսյան**

Ղեկավար՝ **Քնարիկ Պետրոսյան**

ԵՐԵՎԱՆ 2023

Բովանդակություն

Ներածություն---------- 3

Հիմնական բովանդակությունը ---------- 4

Եզրակացություն ---------- 13

Օգտագործված գրականություն և էլեկտրոնային ռեսուրսներ ----------14

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն հետազոտական աշխատանքը նվիրված է օտար լեզուների դասավանդման մեթոդիկայի գիտականորեն դեռևս քիչ ուսումնասիրված խնդրին՝ երգին, որպես օտար լեզվի ուսուցման մեջ կարևորագույն հաղորդամիջոցի, դիդակտիկական, մեթոդական լուսաբանում:

Երաժշտությունը բնութագրվում է չափազանց ուժեղ հոգեբուժական ազդեցություններով և զգացմունքային արձագանքներով հարուստ միջոց:

Սա թույլ է տալիս մեզ օգտագործել երգը կամ երաժշտությունը ուսուցման մեջ:

Հանրակրթական դպրոցում օտար լեզվի դասավանդումը մեծ նշանակություն ունի սովորողների լեզվական գիտելիքների, հաղորդակցական հմտությունների ձեռքբերման և լեզվամտածողության ձևավորման համար: Ժամանակակից սովորողները բարձր են գնահատում օտար լեզվի իմացությունը, նրանց համար շոշափելի հաղթանակ է օտար լեզվով ազատ հաղորդակցվելու կարողությունը: Սակայն նկատենք, որ հատկապես կրտսեր դպրոցում սովորողները կարող են բախվել որոշակի դժվարությունների, ուստի նպատակահարմար է, որ ուսուցիչն ուսումնական նյութի հաղորդման այլընտրանքային եղանակներ դիտարկի: Օարինակ՝ երաժշտության հետ միջառարկայական կապերի ապահովմամբ ուսումնասիվող նյութը դառնում է առավել հասանելի, մատչելի, սովորողը մեծ հետաքրքրությամբ է սովորում օտար լեզվով երգերը: Արդյունքում՝ զարգանում է վերջինիս լեզվական ու հաղորդակցական հմտություններն ու մշակութային կարողունակությունը: Հետազոտության թեման արդիական կարելի է համարել հենց միջառարկայական կապերի ապահովմամբ ուսուցման անհրաժե'տության կարևորմամբ, ինչը թույլ կտա, որ սովորողներն առավել սիրեն առարկան, հետաքրքրվեն ու մոտիվացվեն:

Սովորողների մոտիվացիայի, առաջադիմության բարձրացման համար ուսուցիչն ամեն կերպ պետք է ընդառաջ գնա կրթական նորարարություններին, դասի պլանավորման հիմքում դնի ժամանակակից դասավանդման մեթոդներ, որպեսզի դասապրոցեսը սովորողի համար հետաքրքիր լինի: Այս վերջնարդյունքը պահանջում է երկարատև ու համակարգված աշխատանք, որտեղ կարևոր են և՝ սովորողի նախաձեռնողականությունն ու մոտիվացիան, և՝ ուսուցչի մասնագիտական ու մարդկային որակները:

Հետազոտության նպատակը:

Հետազոտության նպատակն է ուսումնասիրել երգերով ուսուցման հնարավորությունները ֆրանսերենի դասավանդման ընթացքում:

Հետազոտության խնդիրը: Դիտարկել երաժշտություն-ֆրանսերեն արդյունավետ միջառարկայական կապերի ապահովման եղանակները:

Հիմնական բովանդակություն

Երգերը, անշուշտ, պատկանում են զվարճալի գործողությունների խմբին, որոնք ծառայում են որպես օգտակար գործիքներ լեզուն սովորելու համար և որոնք ճնշում չեն գործադրում աշակերրների վրա անմիջապես լեզուն արտադրելու, այլ սկսելու դա անել միայն այն ժամանակ, երբ նրանք պատրաստ են: Նրանք կարող են պահպանել սովորողների զարգացումը: Կարդալու, գրելու, լսելու և խոսելու կարողություն, ինչպես նաև արտասանության, ռիթմի, քերականության և բառապաշարի սովորելու հնարավորություններ: Բառապաշարը համարվում է լեզվի ուսուցման սիրտը , քանի որ չորս լեզվական հմտությունների բառապաշարի հիմնական բաղադրիչները պետք է յուրացվեն սովորողների կողմից: Բառապաշարի լավ տիրույթը մեծապես նպաստում է արդյունավետ հաղորդակցությանը:

Դա օտար լեզու սովորելու հիմնական տարրերից մեկն է, որը պատշաճ կերպով չսովորելու դեպքում կդժվարանա ֆրանսերեն սովորել:

Աշխատանքի արդիականությունը պայմանավորված է բառապաշարի գիտելիքները զարգացնելու համար երգերի օգտագործման անհրաժեշտությամբ:

Ժամանակակից աշխարհում օտար լեզվի դերն աճում է մարդկային կյանքի բոլոր ոլորտներում, որն էլ իր հերթին թելադրում է օտար լեզուների դասավանդման նոր մոտեցում, ինչպես նաև ուսումնական գործընթացում օտար մշակույթի, տեղի մասին նոր հայացքի ձևավորում: Ֆրանսերենի ժամանակակից ուսուցումը նպատակ ունի աշակերտների լեզվական և սոցիալական հարմարեցումը ժամանակակից կյանքին: Մանկավարժական գիտությունը զարգանում և հանգեցնում է դասավանդման նոր մեթոդների և տեխնոլոգիաների ավելացմանը:

Ժամանակակից փորձառու մասնագետը պետք է ունենա մտքերի ֆրանսերեն արտահայտման հմտություններ: Դա անելու համար անհրաժեշտ է ստեղծել այնպիսի մթնոլորտ, որը նման է երեխաներին բնական մթնոլորտին: Նման բնական, անհանգստությունից զերծ միջավայր ստեղծելու լավագույն միջոցներից մեկը հետաքրքիր գործունեությունն է:

Օտար լոզուների ուսուցումը եղել և շարունակում է կարևոր դեր խաղալ անձի զարգացման գործընթացում; Այդ իսկ պատճառով ժամանակակից կրթական համակարգում անընդմեջ կատարելագործվում են օտար լեզվի ուսուցման մեթոդներն ու եղանակները, ավանդական մեթոդներին փոխարինելու են եկել ինտերակտիվ մեթոդները:

Ուսումնական գործընթացը գլոբալ տեղեկատվական հասարակության մեջ պահանջում է ավելի ստեղծագործական մոտեցում կրթության նկատմամբ; Երգերը միշտ կարևոր դեր են խաղացել մարդկանց կյանքում. դրանք շրջապատում են մեզ ամենուր և լայնորեն ընդունված են ամբողջ աշխարհում: Թվում է, թե երգերի հանդեպ սերը խորապես արմատավորված է մարդկության մեջ: Երգերից խուսափելը հեշտ գործ չէ, քանի որ այն պատկանում է կյանքի բազմաթիվ ոլորտներին: Տարբեր տեսակի երգեր կարելի է լսել գրեթե ամենուր և նույնիսկ կարևոր իրադարձությունների ժամանակ: Երգեր կարելի է գտնել յուրաքանչյուր մարդկային մշակույթում: Մասնավորապես, մենք դա կարող ենք լսել գրեթե ամենուր՝ ռադիո լսելիս, հեռուստացույց դիտելիս և ընտանեկան

տարբեր առիթներով, ինչպիսիք են ծննդյան երեկույթները, հարսանեկան արարողությունները, ռեստորաններում, խանութներում, մեքենաներում և նույնիսկ փողոցներում:

Երգերը կարող են ստեղծել զգացմունքների լայն շրջանակ: Ոչ միայն երգերը հասանելի են ամենուր, այլ նաև հնարավորություն կա երգելու առանց որևէ ձայնագրություն լսելու: Ոչ միայն մարդիկ լսում են, այլև խոսում են դրա մասին, քանի որ երաժշտությունը կարծես բավականին տարածված թեմա է հատկապես դեռահասների շրջանում, ովքեր կիսում են իրենց կարծիքը արտիստների հետ կապված վերջին նորությունների կամ վերջերս տեսած բոլորովին նոր տեսահոլովակների մասին: Որոշ մարդիկ օգտակար են համարում երգերի և երաժշտության օգտագործումը սոցիալական միջավայր ստեղծելու, գործընկերության զգացում ձևավորելու կամ պարզապես պարելու համար:

Հոդվածում ուսումնասիրվում է երաժշտության կիրառության օգուտը բժշկության, կրթության և մասնավորապես օտար լեզվի դասավանդման մեջ:

Համատեղելով երգն ու երաժշտությունը օտար լեզվի դասավանդման հետ՝ կարելի է թափանցել ենթագիտակցության խորքերը, ոգևորել և հետաքրքրություն առաջացնել երգահանների, կոմպոզիտորների, նրանց մշակույթի, պատմության, արվեստի նկատմամբ, նպաստել անձի լիարժեք զարգացմանը, ձևավորել ստեղծագործական մտածողություն և ճաշակ:

Ֆրանսերեն լեզվի դասավանդումն իմ մասնագիտությունն է և իմ կյանքի անբաժանելի մասը վերջին 30 տարիների ընթացքում: Ողջ ընթացքում հետաքրքրվել եմ լեզվաբանության և լեզվի դասավանդման մի շարք բնագավառներով, ֆրանսերենի դասավանդման հետ առընչվող հիմնահարցերով:

Մասնագիտական որոնումներին զուգահեռ, ինչպես յուրաքանչյուր անհատ, հետապնդում եմ մի շարք հետաքրքրություններ, որոնցից կարևորագույնը թերևս երաժշտությունն է, կամ երգը:

Ցավոք սրտի ոչ մի երաժշտական կրթություն չեմ ստացել, ոչ մի երաժշտական դպրոց չեմ հաճախել, չեմ տիրապետում ոչ մի երաժշտական գործիքի, ինչպես նաև չեմ հաճախել երգի որևէ խմբակի / չհաշված դպրոցական տարիների երգչախմբի մասնակցությունը/:Սակայն երգեցողությունն իր ուրույն տեղն է զբաղեցնում իմ կյանքում և Աստված ինձ շնորհել է գեղեցիկ և անուշ ձայն: Սիրում եմ երգել և հաճույք պատճառել իմ շրջապատին:

Երաժշտությունն ու երգը մեզ ուղեկցում են ողջ կյանքի ընթացքում, տարբեր իրավիճակներում, ուրախ և ցավոք սրտի նաև տխուր պահերին:

Դրանք հաճույքի, զվարճանքի և ոգեշնչման մեծ աղբյուր են հաղորդակցման ու շփման հզորագույն միջոց:

Երաժշտական ստեղծագործությունները դարձել են մուլտֆիլմերի անբաժանելի մասեր:Երեխաներից շատերը որոշ ստեղծագործություններ ճանաչում են հենց խաղարկային ֆիլմերի շնորհիվ:

Օրինակ՝ Դիսնեյի ստուդիայի մուլտֆիլմերում հնչած երգերը թարգմանված են նաև ֆրանսերեն լեզվով և աշակերտները մեծ հետաքրքրությամբ են դրանք լսում ֆրանսերենով:

Այժմ անդրադառնանք այն հարցին, թե ինչու է անհրաժեշտ երբեմն համակցել երաժշտությունն ու օտար լեզուն, ինչ առավելություններ է ընձեռում երգն ու երաժշտությունը դասավանդման մեջ, ինչպես այն կարող է օգնել սովորել և հիշել նյութը հեշտությամբ և հաճույքով ֆրանսերեն լեզվի դասավանդման ընթացքում հաճախ են օգտագործվում երգեր:

Երգերը օտար լեզվի դասավանդման ժամանակ կարող են մի քանի նպատակ հետապնդել:

1. դրանք նպաստում են աշակերտների ունկնդրման հմտության զարգացմանը, ճիշտ առոգանությանը, հետևաբար բարելավում են նրանց բանավոր խոսքը:

2. կարող են օգտակար գործիք հանդիսանալ նոր բառապաշարի, արտահայտությունների, քերականական կառույցների ձեռքբերման համար; Երբեմն ավելի հեշտ է օտար լեզվով երգել քան խոսել:

Դասարանում երգերի օգտագործման մեծագույն առավելությունն այն է, որ դրանք զվարճալի են:ՊԻսկ զվարճանքն ու հաճույքը իրենց հերթին սովորելու և գիտելիք ձեռք բերելու կարևուրագույն նախապայմաններից են:

Երգն ու երաժշտությունը ներդաշնակություն են մտցնում մտքի, մարմնի և հոգու միջև:

Անհերքելի է այն հանգամանքը, որ դրական մթնոլորտը դասարանում աշակերտների առաջադիմության գրավականներից մեկն է: Երաժշտությունը առաջացնում է որոշակի էմոցիոնալ ֆոն, դրական հույզեր և ոգեվորություն, բարձրացնում է տրամադրությունը:

Շատերս ենք առընչվել ձայնագրված երաժշտության հետ սրճարաններում, խանութներոևմ և այլուր: Երաժշտության ոճը կախված է նպատակներից՝ հանգստացնել, լիցքաթափել կամ նաև հակառակը ոգևորել, աշխուժացնել, դրդել որոշակի գործողության:

Շատ աշակերտներ նշում են, որ դաս սովորելուց նրանք լսում են երաժշտություն կամ երգեր, քանի որ այն օգնում է նրանց հեշտ յուրացնելու նյութը:

Օտար լեզվով երգեր լսելը նույնպես նպաստում է լեզվի հեշտ յուրացմանը:

Հաճախ օգտագործելով ֆրանսերեն լեզվի դասապրոցեսի ընթացքում, ինչպես պարզ զանազանման միջոց , դասապրոցեսն ավելի հետաքրքիր և պարզ դարձնելու համար ողջուսումնական պրոցեսի ընթացքում, երգն օգտագործվում է դասն ավելի հետաքրքիր դարձնելու համար:

Երգի միջոցով, մենք աշակերտներին մոտիվացիա ենք հաղորդում: Չենք դադարում ֆրանսերեն լեզվի ուսումնասիրությունը, քանի որ աշակերտները սովորում են նոր բառեր, ֆրանսիական հայտնի արտահայտություններ, կենդանիների անունները, գույները և այլն:

Երաժշտությունը կամ երգը դա մի փոքրիկ հատված է բանաստեղծության, որը ներկայացնում ենք երգի միջոցով, որը բաժանված է մասերի և որն էլ պարունակում է կրկներգ:

Մեր օրերում, խոչընդոտը, որ հանդիպում է դասավանդողին դասապրոցեսի ընթացքում օտար լեզուների դասավանդման ժամանակ, դա սովորողների կամ աշակերտների մոտիվացիայի բացակայությունն է: Օտար լեզվի մի շարք մասնագետներ և մանկավարժության գիտակներ,

փորձում են պակասեցնել և գտնել հնարքներ /միջոցներ/, որոնք կարող են արգելակել / խոչընդոտել/, աշակերտների մոտիվացիան և գտնել միջոցներ աշակերտների մոտ առաջ բերելու հետաքրքրությունը ուսման հանդեպ:

Մե ր ուսումնառության ընթացքում, մենք կփորձենք ցույց տալ, որ երգը կամ երաժշտությունը կարող են հանդիսանալ ուսումնառության գործիքներ: Այն կարող է հանդես գալ որպես դասարանական գիտահետազոտական աշխատանք, ինչպես նաև միջոց բացատրելու քերականական կանոն, ներմուծելու նոր բառապաշար:

Մենք կփորձենք պատասխանել մի քանի հետևյալ հարցերի.

1 Ի՞նչ են կարծում աշակետները դասապրոցեսին երգի ինտեգրման հարցում,

2 Ի՞նչ տեսակի երգ կարելի է օգտագործել դասապրոցեսին,

3 Ինչպե՞ս իրականացնել մի ծրագիր դասարանում հենվելով երգի վրա,

4 Արդյո՞ք այս երգերի ինտեգրումը աշակերտներին կմոտիվացնի և կզարգացնի նրանց միտքը:

<u>Ի՞նչ է մոտիվացիան աշակերտների մոտ</u>

Ըստ հայտնի մանկավարժ Ռոլան Վիոյի, մոտիվացիան դպրոցականների մոտ դա դինամիկ վիճակ է, որն ունի երեխան ինքն իր մեջ և իր շրջապատում, և, որը ստիպում է երեխային ընտրելու մի գործունեություն, լինել դրան հավատարիմ և իրականացնելու այն իր նպատակին հասնելու համար:

Այս եզրակացությունը մեզ թույլ է տալիս տարբերելու 3 հիմնական գործոն, որոնք կարող են օգնել մոտիվացնելու աշակերտներին դասապրոցեսին.

1. դասապրոցեսին աշակերտի տրամադրվածությունը,

2. աշակերտի միջավայրը / դասարան, ընկերներ, ընտանիք/,

3. իրականացնելու մանկավարժական հնարքներ

Առաջին գործոնը կախված է հենց իրենից աշակերտից, իր մասնակցությունից, իր պարտականությունից, իր գործառույթներն իրականացնելուց:

Իսկ մյուս երկուսը՝ սովորողից կախված չէ:

Սովորել ֆրանսերենը ֆրանսիական երգերի միջոցով դա ամենալավ միջոցներից մեկն է բարելավելու ֆրանսերեն լեզվի արտասանությունը, ինչպես նաև հասկանալը:

Երգերը դրանք զվարճալի միջոց են լեզուն սովորելու համար:ֆրանսերեն լեզուն շատ հարուստ է իր թեմատիկ երգերով, իր բազմազանությամբ, ինչպես նաև բոլոր տարիքի անձանց համար:

Աշակերտին մոտիվացնելու համար, երգեր լսելու համար, պետք է կապ ստեղծենք սովորողի և տվյալ նյութի միջև:

Առաջադրանքների տեսակներ երգերը տեքստերը կիրառելիս

1. Աշակերտները կանխատեսում են տեքստի բովանդակությունը՝ կարդալով դրա վերնագիրը:

2. Սովորողները երկխոսություն են գրում հերոսների միջև:

3. Կտրեք և խառնեք տեքստի տողերը (նախադասությունները): Ուսանողները դասավորում են խառնված նախադասություններ:

4. Աշակերտները կարդում կամ լսում են տեքստը՝ հաստատելու այն, ինչ կանխատեսվել է:

5. Աշակերտները կարդում են բացված տեքստը և լրացնում դատարկ տեղերը:

6. Աշակերտները կարդում են տեքստը և ջնջում բառերը՝ ուրիշների համար բացը լրացնող առաջադրանք ստեղծելու համար:

7. Աշակերտները նամակ են գրում տեքստի հերոսներից մեկին կամ մեկին:

8. Աշակերտները կարդում կամ լսում են տեքստը՝ ամփոփում գրելու համար տեղեկատվություն հանելու համար:

9. Խառնեք տեքստի վերնագրի բառերը/տառերը, որպեսզի սովորողները վերակառուցեն:

10. Աշակերտները գրում են իրենց բառերը երգի մեղեդիով:

11. Աշակերտները կարդում կամ լսում են տեքստը և բացահայտում շեշտը, ռիթմը և ինտոնացիոն օրինաչափությունները:

12. Աշակերտները կարդում կամ լսում են տեքստը և ճիշտ հերթականությամբ տեղադրում լուսանկարներ/մուլտֆիլմի նկարներ:

13. Աշակերտները հարցազրույց են տալիս կերպարներից մեկին:

14. Աշակերտները յուրաքանչյուր պարբերության/հատվածի համար հորինում են վերնագիր և տեքստի/երգի ընդհանուր վերնագիր:

15. Աշակերրները մտքեր են փոխանակում թեմայի վերաբերյալ:

16. Օգտագործեք տեքստը որպես ցատկահարթակ՝ քննարկումներ սկսելու համար՝ զարգացնելու ուսանողների գաղափարները թեմայի վերաբերյալ:

17. Աշակերտները պատասխանում են բազմակի ընտրության/ըմբռնման հարցերին և այլն:

18. Աշակերտները ստեղծում են իրենց սեփական բազմակի ընտրության/ըմբռնման հարցերը ուրիշների համար

19. Սովորողները նկարագրում/քննարկում են թեմային առնչվող լուսանկարներ/նկարներ:

20. Աշակերտները բացահայտում են տեքստում օգտագործված բառերի/արտահայտությունների իմաստը:

21. Աշակերտները դերեր են խաղում (մասեր) իրավիճակը, ինչպես նկարագրված է տեքստում:

22. Աշակերտները պատասխան են գրում հեղինակին/երգչին:

23. Նախապես սովորեցրեք անհրաժեշտ բառապաշարը, որպեսզի օգնեք ուսանողներին հասկանալ տեքստը:

24. Աշակերտները կանխատեսում են բառապաշարի հնարավոր տարրեր, որոնք կարող են հայտնվել տեքստում:

25. Աշակերտները մտքեր են փոխանակում բառապաշարի մասին, որը կարող է կապվածաժշտությունը կամ երգը օտար լեզվում ուսուցման արդյունավետ միջոց է;

26. Աշակերտները վերագրում են տեքստը մեկ այլ կերպարի տեսանկյունից:

27. Աշակերտները լսում են երգը և թելադրում:

28. Աշակերտները հայտնաբերում են դիտավորյալ սխալներ (բառապաշարի, քերականության, շարահյուսության և այլն):

29. Աշակերտները ձևավորում են երգի խթանման թեմային վերաբերող պաստառներ, որոնք այնուհետև ցուցադրվում են:

30. Սովորողները կատարում են երգը.

31. Բաց թողնել բառերը և փոխարինել համապատասխան գծագրով: Աշակերտները հայտնաբերում են բաց թողնված բառերը նախքան տեքստը կարդալը կամ լսելը:

32. Բաց թողեք բառերը՝ բացված տեքստ ստեղծելու համար: Աշակերտները վերակառուցումեն տեքստը՝ ցուցակից ընտրելով ճիշտ բառը:

33. Աշակերտները գրում են տեքստի ամփոփում:

34. Աշակերտները հորինում են շարադրությունների վերնագրեր՝ կապված տեքստի թեմային

Երաժշտական ականջը, ուշադրությունը սերտորեն կապված են ակնարկող ապարատի զարգացման հետ: Սովորում և կատարում են կարճ, անկրկնելի մեղեդիական նկարներ, բայց հստակ ռիթմով, երգերի հաճախակի կրկնողություններով, օգնում են հիշատակել հնչյուններ, շեշտադրումներ, հնչյունների և խոսքերի ավելի արագ և երկար ժամանակ:

Երգի օգտագործման շնորհիվ դասի հոգեբանական մթնոլորտը զգալիորեն բարելավվում է, անհետանում է լարվածությունը, աշակերտների զգացմունքային երանգը բարձրանում է և այդ առարկայի հանդեպ հետաքրքրությունը պահպանվում է:

Ինչպես արդեն նշեցինք երգը հանդիսանում է գործիք, հնարք ֆրանսերեն լեզվի ուսուցումը կազմակերպելու համար, ավելի հետաքրքիր, զվարճալի և ավելի հասկանալի դարձնելու համար:

Դպրոցական տարիքի երգերն ավելի զվարճալի են, դրանք կարող են մոտիվացնել երեխաներին, չմոռանանք նաև, որ ֆրանսերեն երգերի միջոցով աշակերտներին հրամցնում ենք ֆրանսիական կուլտուրան:

Երգի բառերը զբաղեցնում են շատ կարևոր դեր ֆրանսիական երգերում, դրանք կարող են պատմել պատմություններ այն մարդկանց մասին, ովքեր ստեղծում և կատարում են դրանք, ինչպես Renaud , Ferrat, Brassens , Joe Dassin .

<u>Ո՞րոնք են ֆրանսիական երգերի դրական կողմերը ֆրանսերեն լեզվի ուսուցման ընթացքում</u>

Երգերը խաղում են կարևոր դեր օտար լեզուների ուսուցման գործընթացում:

Կարող ենք ներկայացնել մի շարք դրական կողմերը:

Օրինակ՝ այն մեզ հնարավորություն է տալիս՝

- Հիշել բառերն ավելի արդյունավետ երաժշտության և երգի կրկնությունը մեզ հնարավորություն կտա հիշելու բառերը,

-Բացահայտելու արտահայտությունները,

-Երգերը դրանք առիթ են բացահայտելու բազմաթիվ արտահայտությունները սովորելու շատ կամ հաճախակի օգտագործվող ֆրանսիական արտահայտություններ,

- Բարելավելու արտասանությունը,

- Մի շարք ռնգային հնչյուններով, բաց վանկերով և համր տառերով, երգը լավագույն միջոց է դրանք ճիշտ արտաբերելու և ճիշտ արտասանելու հնչյունները ֆրանսերենով,

-Հարստացնել բառապաշարը

-Բացահայտենք ամենօրյա օգտագործման բառապաշարը մեզ ծանոթ կոնտեքսներում և տարբեր բնագավառներում;

-Հասկանալ և ճանաչել ֆրանսիական մշակույթը

-Ֆրանսերեն երգերն անդրադառնում են Ֆրանսիայի կյանքի բազմաթիվ կողմերի վա / երգեր սիրո մասին, Ամանորի երգեր, հայրենասիրական կամ մայրերին նվիրված երգեր /

<u>Ամանորին նվիրված երգեր՝</u>

Petit Papa Noel
Quand tu descendras du ciel
Avec tes jouets par milliers
N’oublie pas mon petit soulier.

Շաբաթվա օրերին նվիրված՝

Lundi matin
Le roi, sa femme et le petit prince

Sont venus chez pour me serrer la pince

Mais comme j’étais parti
Le petit prince a dit
Puisque c’est ainsi
Nous reviendrons
Mardi, mercredi , jeudi , vendredi, samedi, dimanche

Գույներին նվիրված՝
Au pays des couleurs
On y danse, on y danse
Au pays des couleurs
On y danse tous ensemble
Quand je dis rouge
Plus rien ne bouge
Quand je dis bleu
Tu caches tes yeux etc .

Երգը միաժամանակ սովորեցնում է թե ինչպես են կապվում բառերը միմյանց, օգտագործում և բարելավում է արտասանությունը իրար կապելով բառերը /liaison , enchainement /:

Բազմաթիվ արհեստավարժ մանկավարժներ գիտակցում են, որ երգելը, երգեր լսելը և արտասանելը շատ կարևոր գործիքներ են օտար լեզուն սովորելու համար:

Մի շարք ուսումնասիրություններ ցույց են տվել, որ երգը կամ բանաստեղծությունները շատ արդյունավետ միջոց են արտասանությունը սովորեցնելու գործընթացում;

Երաժշտության ուսկնդրումը դա լավագույն տեխնիկան է բացահայտելու համար մի նոր թենատիկա:

Ըստ իս՝

- Երգը չպիտի լինի երկար /1-3 տուն/,
- Ոչ շատ արագ/ հեշտ երգելու համար/
- Հասկանալի

<u>Ինչպես բարելավել ֆրանսերենի ուսուցումը երգերի միջոցով</u>

Հետևյալ գործընթացը թույլ է տալիս սովորել ավելի դյուրին նոր բառեր և երգել միաժամանակ; Ավելի արդյունավետ սովորելու համար.

. ընտրել ավելի ռիթմիկ երգեր, երենք կրկնվում են

. կարդալ երգի բառերը բարձրաձայն

. փնտրել բառարանով անծանոթ բառերը

. լսել երգը և կարդալ բառերը միժյամանակ

. փորձել երգել առանց նայելու բառերը

. կրկնել և զվարճանալ;

Մեկ անգամ ևս համոզվում ենք, որ թե՛ օտար լեզվի իմացությունը, և թե՛ երաժշտությունը, հատկապես վաղ հասակից մեծ դեր են խաղում անձի աշխարհայացքին, մտահորիզոնի ձևավորման և զարգացման գործընթացում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Խոսելով դպրոցականների ակտիվ բառապաշարի հարստացման, ֆրանսերենով հաղորդակցման հմտությունների զարգացման գործում ֆրանսերեն երգերի դերի մասին՝ հանդես գանք մի քանի արձանագրումներով: Տարրական դասարաններում ֆրանսերենի ուսուցմանը նպաստում են փոքրիկ բանաստեղծությունները, երգերը, խաղերը, որոնք կարող են օգնել անհրաժեշտ բառապաշարի ներմուծմանն ու ամրապնդմանը: Դրանք լավագույն միջոց են ցածր տարիքի երեխաների մոտ լեզվի նկատմամբ հետաքրքրություն և սեր առաջացնելու, ինչպես նաև դասապրոցեսի արդյունավետությունը բարձրացնելու համար: Ֆրանսերենի ուսուցման սկզբնական շրջանը ամենապատասխանատուն է, քանի որ այստեղ է դրվում հետագա կրթության համար անհրաժեշտ գիտելիքների և կարողությունների հիմքը: Ֆրանսերենին տիրապետելու հաջողությունը կախված է լեզվի ուսուցման ճիշտ դրվածքից և նրա գործնական ուղղվածությունից: Սկզբնական շրջանում են ձևավորվում, զարգանում և մշակվում շրջապատն ու շրջապատող մարդկանց ճանաչելու, դիմացինի ասածը հասկանալու, հարցերին պատասխանելու, ինքնուրույն արտահայտվելու, զրույցի մեջ մտնելու հմտություններն ու կարողությունները: Ուստի միջառարկայական կապերով ուսուցումը կարող է խթանել վերը բերված նպատակներին հաստելու համար:

Համոզված ենք, որ մեր հանրակրթական դպրոցների ֆրանսերեն դասավանդող ուսուցիչները կշարունակեն ջանասիրաբար փնտրել և կիրառել բոլոր ժամանակակից այլընտրանքային մեթոդները՝ աշակերտների՝ ֆրանսերեն սովորելու մոտիվացիան մշտապես բարձրացնելու նպատակով: Հակառակ դեպքում սովորողը կհիասթափվի առարկայից և չի ունենա սովորելու մոտիվացիա: Այս պարագայում խրախուսում ենք մանկավարժական աշխատողների, մասնավորապես՝ երաժշտության և ֆրանսերեն լեզվի ուսուցիչների նպատակային համագործակցությունը՝ ինտեգրված դասեր, ճանաչողական ու ցուցադրական միջոցառումներ կազմակերպելու և անցկացնելու առումով: Հենց նման համագործակցությամբ է հնարավոր բարձրացնել սովորողների աշխատունակությունը և սիրել տալ ուսումնական առարկան:

Օգտագործված գրականության ցանկ

1. Գիտամեթոդական հանդես, Օտար լեզուները Հայաստանում, էջ 9:
2. «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 27:
3. ՀՀ Կառավարության 4 փետրվարի 2021 թվականի N 136-Ն որոշում:
4. www youtub .com